ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀՐԱՎԻՐԱՏՈՒՄ

Շուշին յուրաքանչյուր հայի համար սրբություն էր: Այժմ՝ պղծված սրբություն:

Շուշին յուրաքանչյուր հայի համար նաև Անի է, Վան է, Տիգրանակերտ:

Տարբերությունն այն էր, որ մինչև գորբաչովյան իշխանությունը այդ հայկական ինքնատիպ ու չքնաղ վայրը մարդիկ գընում էին թե՛ Գորիսի, թե՛ Ստեփանակերտի կողմից: Թեկուզ դժկամ, այնուամենայնիվ, թրքուհի էքսկուրսավարը հարյուրավոր հայկական անուններ էր տալիս՝ Նելսոն Ստեփանյան, Հովհաննես Թևոսյան, Մուրացան, Հայկական հսկա Ղազանչեցոնց եկեղեցին... Հիմա նրա «թագավորության» օրոք, նրա ինտերնացիոնալ քաղաքականության շնորհիվ վերջին մոհիկաններն են թողել ոչ միայն Բաքուն, Գանձակը, Սումգայիթը, այլև՝ Շուշին:

Ավագ եղբայրներս՝ Բենիամին, Եսավ, ծնվել էին Շուշիում, որտեղ մշտական բընակություն էին հաստատել ծնողներս: Մյուս հինգ հոգիս ծնվել ենք հայրական Սիստորաշեն գյուղում:



Երբ 1920 թվականին Շուշին արյան ու բոցերի մեջ տնքում էր, հայրս Սիստորաշենից մի ձի է վարձում, տանում Շուշի, մի ձեռք տեղաշոր բարձում, մայրս ընստում է թամբին, 4 տարեկան երեխան գրկին, 6 տարեկանը՝ գավակին, ճամփա են ընկնում դեպի Սիստորաշեն: Եվ որպեսզի ճանապարհին դաչաղ (ավազակ) նաբիները չհարձակվեն թալանի համար, բոլոր ոսկեղեններն ու զարդերը շորի մեջ փաթաթում են ու թաքցնում ծխնելույզի մեջ...

Հայրս հույս ուներ, թե մեկ-երկու շաբաթից կրկին կվերադառնան Շուշի և կապրեն հաշտ ու խաղաղ (միամի՜տ հայ):

Հետագայում մայրս որպես օրորոցային պատմում էր շատ հետաքրքիր ու հուզիչ պատմություններ Շուշիի մասին՝ թատրոն ու թատերական ավանդույթներ, գիսաստղի դիմավորումը անդունդի եզրին, որտեղ ողջ քաղաքն էր անհամբեր սպասում, ուրախություն, խրախճանք: Կամ որ մեծահարուստ Թամիրենց Թադևոսը աղբրի սառնորակ ջուր է քաշում Շուշի, հազարավոր ոսկիներ ծախսելով, կավե մաքրամաքուր խողովակներով, որից առայսօր օգտվում են վայրագները, ապականելով ոչ միայն Ղազանչեցոնց հոյակերտ տաճարը, այլև բարերարի գերեզմանաքարը՝ Փարիզից բերված սև սաթե մարմար՝ դրված եկեղեցու բակում:

Եղբայրներիս ու քույրիկներիս համար ամենահուզիչն այն էր, երբ մայրս պատմում էր, որ եկեղեցին վերանորոգելուց հետո, հանդիսավոր արարողության ժամանակ պետք է խաչն ամրացվեր գագաթին:

Մեկը բարձրանում է, որ ամրացնի, վիթխարի բարձրությունից սարսափահար կուչ է գալիս: Ո՞վ կբարձրանա, ով չի բարձրանա, ընտրությունը կանգ է առնում մորական պապիս՝ ուստա Մարկոսի վրա: Նա բարձրանում է, ոչ միայն խաչն է ամրացնում, այլև թևի տակ առնում մյուս ընկերոջն ու հաջողությամբ իջեցնում:

Հետո՝ համընդհանուր տոնախմբություն, մատաղ, զոհաբերություններ...

Եվ այդ խաչն ու եկեղեցին կանգուն մնում են մինչև Նոբելյան մրցանակի կեղծ դափնեկիրը...

Ծնողներիս ամուսնությունից անցնում է կես դար: Պատմում են, որ համագյուղացի շատ կիրթ ու համակրելի, ճշտապահ Սարուխան Դադայանը (Հայաստանի արդարադատության նախկին նախարար Աշոտ Դադայանի հայրը), ոչ միայն մասնակցել էր մերոնց հարսանիքին, այլև 50 տարի խնամքով պահել, պահպանել է սույն հրավերը:

Երբ խնդրանքով դիմում եմ խնձորի այգեպանին (այսօր էլ տասնյակ հեկտարի հասնող այդ դրախտը կոչվում է Դադայանի այգի), նա սիրով ինձ է նվիրում այդ միակ հուշը, որ ամեն ինչից բացի, նաև բարձրորակ տպագրություն է, կուլտուրա, ճաշակ...

Շնորհակալ եմ, քեռի Սարուխան: Երբ Արցախը կազատագրենք, երբ Շուշին էլ կազատագրենք մարդասպան, մարդակեր ավազակներից, բազում անունների թվում քեզ էլ կհիշենք որպես հույս, որպես Արտամետի խնձորի սերմնացանի:

Դու դարասկզբին ձիով ես Շուշի այցելել, ես դարավերջին Շուշի-Սիստորաշեն երթուղին ոտքով կկտրեմ, կայցելեմ քո սուրբ գերեզմանին:

Վալտեր ԱՅԴԻՆՅԱՆ